

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/7**

**23 դեկտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց ՀՀ Տավուշի մարզի Մովսեսի գյուղապետարանի 24.11.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ կողմից կիրառված տուգանքները վերանայելու վերաբերյալ:

#### **ՀՀ Տավուշի մարզի Մովսեսի գյուղապետարանի դիմումում բերված փաստարկները.**

ՀՀ Տավուշի Մովսեսի գյուղական համայնքի կողմից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն 2013 թ-ի հունվար, փետրվար, մարտ և հոկտեմբեր ամիսների համար հաշվարկվել է 1.210.822 դրամ եկամտային հարկ և նույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ժամկետում նշված ամիսների համար պետական բյուջե է վճարվել 1.241.601 դրամ եկամտային հարկ:

Համայնքային կառավարչական հիմնարկի կողմից վերոհիշյալ ժամանակաշրջանների եկամտային հարկի հաշվարկները հարկային մարմին ներկայացվել են էլեկտրոնային եղանակով 25.06.2014 թ-ին և 24.02.2014 թ-ին:

Հարկային տեսչության կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, որի արդյունքում առաջադրվել է վճարման 213.383 դրամ տուգանք:

Հաշվետվությունները ուշ ներկայացման պատճառը հանդիսացել է այն հանգամանքը, որ մարզպետարանի կողմից տրված նույնականացման քարտ կարդացող սարքը եղել է անսարք: Բացի այդ, ինտերնետային կապը սահմանամերձ տարածաշրջանում անբավարար է:

Համայնքը տարածաշրջանում սահմանակից է ադրբեջանին, համայնքային բյուջեն առաջանում է պետության կողմից հատկացվող դոտացիաներից, սուբվենցիաներից և սեփական եկամուտներից, իսկ ծախսային հոդվածները նախատեսված են տարեկան բյուջեում: Հետևաբար համայնքը չունի համապատասխան գումար մարելու հաշվարկված տուգանքը:

Դիմումատուն խնդրում է հաշվի առնել նաև համայնքային ենթակայության տակ գտնվող Ժ.Խաչատրյանի անվան մանկապարտեզ ՊՈԱԿ-ի կողմից նույն բնույթի խախտումը, այն է՝ 2013 թ-ի հունվար ամսվա եկամտային հարկի հաշվարկը (117.881 դրամ) ներկայացվել է 19.07.2013 թ-ին, սակայն վճարումը կատարվել է 01.02.2013 թ.: Մինչդեռ հարկային մարմնի կողմից առաջադրվել է 53.046 դրամ եկամտային հարկի տուգանք:

Ելնելով վերոգրյալից՝ դիմումատուն խնդրում է վերանայել վերը նշված տուգանքները:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Մովսեսի գյուղապետարան» Պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ նաև գանգատաբեր) կողմից եկամտային հարկի 2013 թ-ի հունվար, փետրվար, մարտ ամիսների հաշվարկները ներկայացվել է 07.05.2013 թ-ին: Արդյունքում, խախտվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, որի համաձայն հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:

2013 թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը գանգատաբերի կողմից ներկայացվել է նույն ամսում, այն՝ 30.10.2013 թ-ին: Խախտվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի 4-րդ պարբերության պահանջները, որի համաձայն հարկային

մարմին հաշվարկները, հաշվետվությունները, հաշվեկշիռները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո:

Եկամտային հարկի 2013 թ-ի հունվար, փետրվար, մարտ ամիսների հաշվարկները 07.05.2013 թ-ին ներկայացվելու համար կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ հաշվարկվել է 132.681 դրամի տուգանք:

2013 թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը 30.10.2014 թ-ին ներկայացվելու համար նույնպես կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթը՝ հաշվարկվել է 82.623 դրամի տուգանք:

Հարկային տեսչության կողմից հեռախոսազանգի միջոցով, ինչպես նաև գրավոր ծանուցմամբ գանգատաբերին բազմիցս տեղեկացվել է վերոգրյալ հաշվարկներն օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված լինելու վերաբերյալ: Գանգատաբերը կատարված խախտումները պատճառաբանել է նույնականացման քարտ կարդացող սարք չունենալու և ինտերնետային կապը խափանումներով աշխատելու հանգամանքներով: Սակայն, նշված պատճառաբանությունները, ըստ էության, չեն կարող հիմք հանդիսանալ վերոգրյալ խախտումների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները չկիրառելու համար:

Ինչ վերաբերվում է Տավուշի մարզի Մովսեսի գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող Մովսեսի Ժ.Խաչատրյանի անվան մանկապարտեզ ՀՈԱԿ-ին, ապա վերջինս եկամտային հարկի 2013 թ-ի հունվար ամսվա հաշվարկը ներկայացրել է օրենքով սահմանված ժամկետից ուշ՝ 19.07.2013 թ-ին: Խախտվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ: Նշված խախտման համար կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ հաշվարկվել է 53.046 դրամի տուգանք:

Գանգատում կիրառված տուգանքները վերանայելու վերաբերյալ բերված միջնորդության կապակցությամբ հարկ է նշել, որ տուգանքից ազատելը, ըստ էության, հանդիսանում է հարկային արտոնություն, որը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն կարող է սահմանվել օրենքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ Տավուշի մարզի Մովսեսի գյուղապետարանի 24.11.2014 թ-ի դիմումով բերված գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ